ԻԶ· ՏԱՐԻ ԹԻՒ 1863 ԵՐԵՔՇԱԲԹԻ 27 ՓԵՏՐՎԱՐ 1879

# ՄԵՃՄՈՒԱՑԸ ՀԱՎԱՏԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 1 Ղրշ· ԹՈՒՂԹ

## ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Քաղաքական իրաց ընթացքին մէջ երկու օրէ ի վեր նոր փոփոխութիւն մը չկայ։

Ամենէն կարևորը՝ օսմ. դանձային ընթացքին դէմ ռուսական վերջին ծանուցագրին խնդիրն է։ Այս ծանուցագիրն Եւրոպայի մէջ իր ազդեցութիւնը չէր ունեցած, զի հոն Թօքվիլի ծրագիրն արդէն անյաջողութեան դատապարտուած կերևէր, ուստի և այդ ծրագրին դէմ ռուսական ծանուցագրին ալ էն մեծ ազդեցութիւն ունենալուն տեղի չկայր այլ ևս։

Իսկ Գաղղիոյ և Անգղիոյ տէրութեանց, Թուրքիոյ ելմտական գործոցը մէջ, աւելի ազդու և ուղղակի միջամտութեան ու հսկողութեան պաշտօն մ՚ստանձնելու որոշմանն առջև՝ ռուսական այդ ծանուցագիրը Թուրքիոյ դանձային վերակազմութեանն ու բարւոքմանը գործոյն առջև իբրև խոչընդոտ մը չհամարուելէն զատ, ընդհակառակն այդ ձեռնարկին ևս առաւել հաստատութիւն մը տալու կնպաստէ։

Զի Ռուսիոյ սոյն ծանուցագիրը տալուն բուն նպատակը ոչ օսմ. արժէտևարց վերածումն և ոչ ալ նոր փոխառութիւնը արգիլել կ՚թուի, այլ թէ ինչ պէս որոշուած էր Բօնկրէին մէջ օսմ. դանձուց վերակազմութեանը համար եւրոպական համազգային յանձնաժողով մը հաստատել տալ է, փոխանակ այդ պաշտօնը մինակ Գաղղիոյ և Անգղիոյ ձեռքը յանձնելու, և եթէ Լօպանոֆ իշխանը իր ծանուցագրին մէջ մինակ այս կէտին վրայ պնդած ըլլար, առանցնէ գանձային խնդրոյ իր մէջ խառնելու, աւելի իրաւացի և աւելի զօրաւոր եղած կըլլար իր առարկութիւնը քան զոր ըրած էր։

Հետևաբար որ կողմն ալ դառնանք՝ օսմ. դանձային ընթացքն իր առջի վիճակին մէջ մնալը պահանջող և դանձային բարւոքման հակառակող և ո՛չ զօր կ՚տեսնենք, այլ իրարու հակառակ կարծուած կողմանց ամենքն ալ օսմ. դանձային բարւոքման և Դրնէն առնելիք ունեցող հին և նոր օսմ. արժէտևարց իրաւունքը ապահովելու պէտքն ու հարկը ճանչելով, այդ արդիւնքը ժամ յառաջ ձեռք ձգելու մասին համամիտ և ջատագով են։

Ինչ է ուրեմն տարբերութիւննին։ Թուրքիա կուզէ որ իր այս դանձային բարւոքումը մինակ Թուրքիոյ. Անգղիոյ և Գաղղիոյ կողմէն ընտրեալ յանձնաժողովոյ մը ձեռօքն ըլլայ, մինչդեռ Ռուսիա ալ կ՚պահանջէ որ՝ ելմտական համազգային յանձնաժողովոյ մը ձեռօքն ըլլայ այդ բանը։ Կ՚տեսնուի ահա թէ՝ ասոնց մէջ բնաւ «չըլլայ» բառ մը չկայ, այլ ամենքն ալ «բարւոքումն ըլլալուն» կողմն են։

Արդ ուրեմն այդ դանձային բարւոքումը, քանի որ արգիլող հակառակորդ մը չկայ, անպատճառ պիտի ըլլայ։ Թող ըլլայ՝ որուն ձեռօքը կ՚ուզէ թող ըլլայ թէ Արևմտեան է եղեր մինակ այդ յանձնաժողովը՝ թէ համազգային. և ինչո՞ւ համար Ռուսիոյ հանած առարկութիւնէն հետևցնելու ելնեմք թէ՝ օսմ. դանձային բարւոքման գործը դժուարութեան հանդիպելով ետ պիտի մնայ, քանի որ Գաղղիա և Անգղիա ալ բնաւ չեն կարծեր յայտնած թէ՝ իրենք այս մասին Ռուսիոյ կամ համազգային յանձնաժողովոյ հետ չեն ուզեր գործել, բայց եթէ երբ առանձինն գործն իրենց յանձնուի։

Գանձային կացութիւնն այսպէս. Քաղաքական կացութեան դալով, Յունաստանի կառավարութեան բռնած անդրդուելի և անզիջող ընթացքը կ՚ցուցնէ թէ՝ ինքը Պերլինի Բօնկրէին մէջ ցուցուած սահմանագծէն պակաս տեղ առնելու պիտի չըհաճի, և կ՚կարծուի թէ խնդրոյն բուն դժուարութիւնն ալ Եանեա քաղաքին վրայ է, զոր Յունաստան կ՚պահանջէ և Դուռըն ալ իրեն իբրև բնական պաշտպանութեան սահմանագիծ՝ զայդ չուզեր ձեռքէ հանել։ Իսկ ինչ ալ ըլլայ՝ անանկ կ՚կարծուի թէ՝ եւրոպական տէրութեանց բռնած արդի քաղաքականութիւնը՝ Յունաստանի նպաստաւոր լինելով, կերևի թէ ասոնք պիտի հրաւիրեն զԲ.Դուռը՝ որ Բօնկրէի որոշած սահմանագծին համեմատ կարգադրէ Յունաստանի սահմանագլխոց խնդիրը։

Գահիրէէն հասած վերջին հեռագիր մը՝ եգիպտական նոր պաշտօնէութենէն՝ Նուպար բաշայի դուրս մնացած ըլլալը կը ծանուցանէ, որն որ նախընթաց աւուր դարձեալ Գահիրէի հեռագրին հակասութիւնն է, որ Նուպար բաշայի իբրև Արտաք. գործ. պաշտօնեայ՝ եգիպտ. կառավարութեան մէջ մնացած ըլլալը կ՚ծանուցանէր։ Եթէ Նուպար բաշա իրօք պաշտօնէութեան մէջ չէ մնացած, այնպէս կերևի թէ՝ ոչ այնքան խտիվին դժկամակութեանը, որչափ նոյն իսկ Նուպար բաշայի այլևս եգիպտ. պաշտօնէութեան մէջ մասնակցութիւն մ՚ունենալ չուզելուն հետևանքն եղած ըլլալու է այդ։

## ԱԶԳԱՅԻՆ

Վանայ կուսակալութեան կողմէն քաշուած հեռագրի մը համեմատ, Բ. Դուռն ալ այս անգամ ծանուցեր է մեր Ս.Պատրիարք Հօր, թէ Ն. Սրբազնութեան խնդրանացը համաձայն Բ. Դրան կողմանէ Տիգրանակերտի կուսակալութեան հեռագրուած ազդու հրամանին վրայ, Տիգրանակերտի գաւառին մէջ և Բաղիշոյ շրջակայքը հայաբնակ գիւղերուն անթիւ և անհամար չարիք ու վնաս հասցընող Ֆարսօ անուն քիւրտ աւազակապետը, որ ասկից առաջ ձերբակալուելով քանի մ՚օր բանտարկուելէն վերջը նորէն թող տրուեր, և որ իր չարագործութիւններն առջինէն աւելի սաստկացուցեր էր, այս անգամ վերստին ձերբակալուելով, ընդ. հսկողութեամբ Վան տարուեր, բանտարկուեր և հարցաքննութեան ենթարկուեր է է, և այժմ յիշեալ չարագործ քրդին դատաստանը կ՚տեսնուի եղեր հոն։

Հայ-կաթոլիկ ազգայնոց մէջ վերջերս կատարուած ամուսնական խնդրոյ մը նկատմամբ, այդ առթիւ եղած այլևայլ տարաձայնութիւնները ջրելու նպատակաւ, հետևեալ գրութիւնը հաղորդուած է մեզ. զոր մեր անկողմնակալութեամբը կ՚փութամք հրատարակել։

### ՊՍԱԿԻ ՄԸ ԽՆԴԻՐ

Ազգային լրագրաց ընթերցողք այս օրերը տեսան հարկաւ որ քանի մը թերթք Թուլումպաճի փողոցի պսակին պարագայից վրայօք երկարաբար գրեցին. և կերպ կերպ անտեղութիւններ նկատեցին այս ամուսնութեանց մէջ. Գիտնալով որ Մանզումէի Էֆքեար, Թէրճէմանը Էֆքեար, և Մամուլ, զանազան դաւանութիւն ունեցող, զանազան չահուց հետևող և զանազան հոգւոյ տէր լրագիրներ են, և տեսնելով որ իւրաքանչիւրը իւր տեսութեան համեմատ կերպարան մը կ՚առնէ, հարկ էր իրաց

